ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«23» հոկտեմբերի 2019 թվականի N: 262 ք.Գյումրի

ԿԱՐԵՆ ԲԱԴԻՇՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ, 4-րդ, 12-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 22-ի N:01/15.1/17414-19 հանձնարարականը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարին փոխարինող, զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Կարեն Բադիշյանին 2019 թվականի հոկտեմբերի 24-ից 25-ը ներառյալ գործուղել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագած համայնք՝ «Արագած» հյուրանոցում կայանալիք «Տարածքային զարգացման ռազմավարական կառավարում» մասնագիտական զարգացման ծրագրի 4-րդ դասընթացին մասնակցելու նպատակով:
2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:
3. Կարեն Բադիշյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է